

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/6

10 հունիսի 2013թ.

Քննարկվեց «ԻԳԼ-ԱՍԱ» ՍՊԸ 29.04.2013 թ-ի դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ ՕՎՎ 16.04.2013 թ-ի թիվ 1003956 ստուգման ակտի դեմ:

«ԻԳԼ-ԱՍԱ» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

Ստուգման ակտի 1-ին կետով՝ Շահութահարկի մասով, ընկերությանն առաջադրվել է լրացուցիչ վճարման ենթակա պարտավորություն 2.233.643 դրամի չափով:

Ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է հետևյալը, մեջբերում. «Համաձայն «ԿԱ ՊԵԿ Քննչական վարչության քննիչ Լ.Վարդանյանի որոշման, Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ստուգումից պարզվեց, որ «ԻԳԼ-ԱՍԱ» ՍՊԸ-ի կողմից 2010 թ.-ի համար ներկայացված շահութահարկի հաշվարկում ձևակերպում չի ստացել 15.09.2010 թ. կազմված թիվ 1010830 ստուգման ակտը: «Շահութահարկի մասին» «Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի և «Կառավարության «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ հաստատված կարգը խախտելու հետևանքով 2010թ. ընթացքում ավել ծախս է ձևակերպել 2070300 դրամ 2010 թ-ի ընթացքում ներկայացված ԱԱՀ-ի հաշվետվությունների համաձայն, իրացման շրջանառությունն արտացոլվել է 21483400 դրամ, իսկ շահութահարկի հաշվետվությամբ այն ցույց է տրվել 19335300 դրամ կամ պակաս շահույթ է արտացոլվել 2148100 դրամ: Այսպիսով, 2010թ ընթացքում պակաս շահույթ է ձևակերպվել 4218400 դրամի չափով.....»:

Արդյունքում շահութահարկի մասով Ընկերությանն առաջադրվել է 2233643 դրամի լրացուցիչ պարտավորություն, որի հետ ընկերությունը համաձայն չէ, գտնում ենք այն անհիմն է և ոչ իրավաչափ, հետևյալ հիմնավորմամբ և պատճառաբանությամբ:

Ինչպես երևում է ստուգման ակտի 1-ին կետից, ստուգումն իրականացնող աշխատակիցների կողմից չի մատնանշվում այն փաստաթղթերի ցանկը, որն ենթարկվել է ստուգման: Իրականում 2010 թ. ընթացքում Ընկերությունն իրականացրել է բազմաթիվ ձեռքբերումներ և ծախսերի հանրագումարը 2010 թ.-ին գերազանցել է արձանագրված ծախսերի գումարը, որոնք սակայն հաշվի չեն առնվել ստուգման ակտի կազմման ժամանակ: Մասնավորապես, հաշվի չեն առնվել կամ մասնակի են ընդունվել ընկերության կողմից 2010թ-ի ընթացքում կատարված հետևյալ ծախսերը.

1/ Վարձակալության պայմանագրով կատարված ծախս 2010 թ-ի ընթացքում 7 ամիսների համար: Յուրանքաչյուր ամսվա վարձակալության գումարը 265.000 դրամ, ընդամենը 1.855.000 դրամ, հիմք՝ 2010 թ-ի համար Հարկային Տեսչություն ներկայացված «Կազմակերպության /անհատ ձեռնարկատիրոջ նոտարի կողմից ֆիզիկական անձանց վճարված /հաշվարկված/ եկամուտների և պահված եկամտահարկի» հաշվարկները:

2/ Աշխատավարձի և գործատուի կողմից կատարված պարտադիր վճարումների ծախսերը 5.573.000 դրամի չափով, հիմք՝ 2010 թ-ի 12 ամիսների համար Հարկային Տեսչություն ներկայացված «Գործատուների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների» հաշվետվությունները:

3/ Ընկերության կողմից համախառն եկամտից կատարված ծախսերի հանրագումարը 2010 թ-ի ընթացքում կազմել է 14.261.458 դրամ /հիմքերը կցվում են/:

4/ 2010 թ-ի ընթացքում ընկերության կողմից ներգրավված վարկային միջոցների հաշվարկված տոկոսների դիմաց կատարվել է 215.528 դրամի վճարում, որը նույնպես չի ընդունվել որպես ծախս:

Ավելին՝ ստուգման ակտը կազմելիս 2010 թ-ի համախառն շահույթը որոշելիս հաշվի չի առնվել նաև 2010 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության դրամարկղում առկա 967264 դրամի մնացորդը:

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների, ինչպես նաև <Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին> հրահանգի 5.1 կետի դրույթներից հետևում է, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

Նշված օրենքի իմաստով ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման: Իսկ անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը:

<Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթը, սահմանելով ծախս հասկացությունը, դրան վերագրում է երկու պարտադիր պայման, այն է՝ ծախսը պետք է լինի եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված:

Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ, 37-րդ, 43-րդ և 63-րդ հոդվածները, ընկերությունը խնդրում է սույն դիմում բողոքն ընդունել վարույթ և 16.04.2013թ-ի թիվ 1003956 առուգման ակտի 1-ին կետն անվավեր ճանաչել ամբողջությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Լ.Վարդանյանի 10.10.2012թ-ի որոշմամբ <ԻԳԼ-ԱՍԱ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) նշանակվել է մասնագիտական ստուգում: Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը 26.10.2012 թ-ին հրապարակել է թիվ 1003956 հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

Ստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 16.04.2013 թ-ի թիվ 1003956 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Ստուգման ակտով շահութահարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունների վերաբերյալ հարկ է նշել, որ ստուգման ընթացքում <ԻԳԼ-ԱՍԱ> ՍՊԸ տնօրեն Ա.Աթանեսյանը ստուգումն իրականացնող անձանց հայտնել է, որ ընկերությունում տնօրեն է նշանակվել 2012 թ-ին: <ԻԳԼ-ԱՍԱ> ՍՊԸ տնօրեն Ա.Աթանեսյանը հայտնել է նաև, որ ընկերության նախկին տնօրենի հետ փաստաթղթերի հանձնում կամ ընդունում տեղի չի ունեցել, որի հետևանքով ստուգմանը չի կարող ներկայացնել 2010 թ-ին վերաբերող փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքը, <ԻԳԼ-ԱՍԱ> ՍՊԸ տնօրեն խնդրել է տրամադրել որոշակի ժամանակ համապատասխան փաստաթղթերը հավաքագրելու և ստուգող անձանց ներկայացնելու համար: Արդյունքում, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամաններով ստուգման ընթացքը կասեցվել է 60 օրով, իսկ 19.03.2013թ-ին ստուգման ժամկետը երկարաձգվել է 10 օրով: Այդ ընթացքում տնօրենի կողմից ներկայացվել են 2010 թ-ին վերաբերող փաստաթղթերի մի մասը, այն է հաշիվ-ապրանքագրեր, <ԱՐՄԵՆԹԵԼ> ՓԲԸ-ի կողմից ստորագրված ակտեր, հաշիվներ, ընդամենը՝ 29 թերթ:

Հիմք ընդունելով ստուգման ընթացքում ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ <Հարկատու-3> տեղեկատվական բազայում և անձնական գործում առկա տվյալները, հաշվարկվել է ընկերության համախառն եկամուտը:



Համաձայն 2010 թ-ի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների և ԱԱՀ-ի գծով տեղեկությունների, իրացման շրջանառությունը կազմել է 21.483.400 դրամ, այդ թվում՝ ապրանքների վաճառքից 1.980.700 դրամ: Շահութահարկի հաշվարկում ծառայությունների մատուցումից հասույթը կազմել է 19.335.300 դրամ, իսկ տարբերությունը դիտվել է որպես պակաս ձևակերպված շահույթ:

Հարկ է նշել, որ ստուգման ընթացքում բացակայել են 2010 թ-ի ընթացքում ձեռքբերված ապրանքանյութական արժեքների ծախսագրման, ինչպես նաև ինքնարժեքը ձևավորող ներքին հաշվառման փաստաթղթերը:

Ստուգումն իրականացրած անձը նշեց, որ հիմք ընդունելով 2010 թ-ի ընթացքում ներկայացված եկամտահարկի հաշվարկներն աշխատավարձի գծով ծախս է հաշվարկվել 3.001.500 դրամ, իսկ ինքնարժեքով ձևակերպման ենթակա սոցիալական վճարի գումարը կազմել է 688.500 դրամ: Ընդամենն աշխատավարձի և սոցիալական վճարի գծով ծախսերը կազմել են 3.690.000 դրամ, սակայն բողոքում նշված է, որ այն կազմում է 5.573.000 դրամ, ինչը հիմնավոր չէ: Ըստ ստուգումն իրականացրած անձի, վարձակալական վճարը կազմել է 1.855.000 դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա փաստաթղթերում ձեռք բերված հումք-նյութերի գեոակշիո մասը կազմել են երկաթե խողովակները՝ գումարով 18.250.604 դրամի, որը տվյալ շինարարական աշխատանքներում չէր կարող ամբողջովին օգտագործվել և դիտվել որպես նյութածախս, իսկ շահութահարկի հաշվարկում ապրանքային մնացորդ արտացոլված չէ, ուստի ԱԱՀ-ով հարկվող ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների համար բացակայող փաստաթղթերի գումարները ստուգմամբ դիտվել են որպես չհիմնավորված ծախսեր:

Հանձնաժողովի 21.05.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ Մ Ա Ն

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ